

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2007 թվականի N 327-Ն

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ (ՔՎՈՏԱՆԵՐԸ) ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(վերնագիրը փոփ. 11.02.16 N 137-Ն)

Ղեկավարվելով «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով՝ Հայաստանի  
Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. (կեսն ուժը կորցրել է 05.02.15 N 90-Ն)

2. Սահմանել օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր  
չափաքանակները (քվոտաները)՝ համաձայն N 2 հավելվածի:

3. (կեսն ուժը կորցրել է 03.11.11 N 1554-Ն)

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան  
հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ա. Մարգարյան

2007 թ. մարտի 22  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2007 թվականի  
մարտի 15-ի N 327-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ  
(հավելվածն ուժը կորցրել է 05.02.15 N 90-Ն)

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2007 թվականի  
մարտի 15-ի N 327-Ն որոշման

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ (ՔՎՈՏԱՆԵՐԸ)

1. Օզոնային շերտը քայքայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետություն  
ներմուծման թույլատրելի ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանվում են  
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-  
Ն որոշման NN 1 և 5 հավելվածներին համապատասխան խմբերի և տարիների:

Խումբը	Տարին	Ներմուծման առավելագույն չափաքանակը (տոննա/տարի)
Անվանացանկ A-ի խումբ I, II Անվանացանկ B-ի խումբ I, II, III Անվանացանկ C-ի խումբ II, III Անվանացանկ E-ի խումբ I	2011 թ-ից սկսած	0
Անվանացանկ C-ի խումբ I	2011-2012 թթ. 2013-2014 թթ. 2015-2019 թթ. 2020-2024 թթ. 2025-2029 թթ. 2030-2039 թթ. 2040թ-ից սկսած	անսահմանափակ 126,69 114,02 82,35 41,17 3,17 0

*(1-ին կետը խմբ. 11.02.16 N 137- Ն)*

2. Սահմանվում են օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման հետևյալ ընդհանուր չափաքանակները (քվոտաները)`

Խումբը	Տարին	Ներմուծման առավելագույն չափաքանակը (տոննա/տարի)
I-V, VII, VIII	2011 թ-ից սկսած	0
VI	2011-2012 թթ. 2013-2014 թթ. 2015-2019 թթ. 2020-2024 թթ. 2025-2029 թթ. 2030-2039 թթ. 2040 թ-ից սկսած	անսահմանափակ 126.69 114.02 82.35 41.17 3.17 0

*(2-րդ կետը խմբ. 03.11.11 N 1554- Ն, 07.06.12 N 715- Ն)*

*(հավելվածը խմբ. 03.11.11 N 1554- Ն, 07.06.12 N 715- Ն, 11.02.16 N 137- Ն)*

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**